ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2020թ. թիվ 18-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով մարզպետարանի աշխատակիցների զեկուցագրերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով մարզպետարանի չորս աշխատակիցներին հատկացնել 1687500 /մեկ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 13
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունվարի 13-ի
թիվ 158-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը
1	Ռևազյան Արամ	Տարեցների միջոցառման հյուրասիրությունը կազմակերպելու համար	50000
2	Ռևազյան Արամ	Հայկ Օհանյանի մահվան կապակցությամբ ծաղկեպսակ և ծաղիկներ	60000
3	Ջաղինյան Վալերի	«Սպիտակի բժշկական կենտրոն» այցելության համար նվեր	27500
4	Ղուբաթյան Սպարտակ	Զոհված զինծառայողների՝ թվով 31 ընտանիքներին Հայոց Բանակի օրվա կապակցությամբ դրամական օգնություն	1550000
	Ընդամենը		**1687500**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ